ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ԴՐԱ ՁԱԽՈՂՄԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

15–րդ դարը հայ քաղաքական մտքի պատմության մեջ հայոց պետականության վերականգնման համար այն հայեցակարգով առաջնորդվելու սկիզբն է, որ այդ պետականությունը, որն իր վախճանն էր գտել մահմեդական ցեղերի նվաճումների արդյունքում, հնարավոր է վերականգնել միայն քրիստոնյա տերությունների օգնության շնորհիվ: Ընդ որում, այս հայեցակարգը հայ քաղաքական մտքի հիմքում մնաց բավական տևականորեն և թերևս այսօր էլ որոշ առումներով շարունակում է մնալ, քանի որ Հայ դատի լուծման խնդրում բազում քաղաքական գործիչների և քաղաքագետների մտահորիզոնում շարունակում է լայնորեն իշխել այն համոզմունքը, որ դարձյալ քրիստոնյա մեծ տերություններն են նպաստելու այդ լուծմանը, որի առաջին քայլը՝ համարվում է նրանց կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը: Նման մտածողության նպատակահարմարության խնդիրը զանց առնելով՝ ուզում ենք շեշտել միայն, որ ինչպես նախկինում, այնպես էլ այսօր երկրորդական պլան են մղվում սեփական ուժերին ապավինելու և այն հայեցակետի վրա հենվող գաղափարները, որ եթե ցանկանում ես, թեկուզ և մեծ տերությունների օգնությամբ, կարևորագույն քաղաքական խնդիր լուծել, ապա՝ նախ և առաջ պետք է քեզանից ինչ-որ բան ներկայացնես:

Հարկավ, հայ ուշմիջնադարյան քաղաքական մտքի առումով չի կարելի այն կարծիքը ներկայացնել, որ դիմելով մեծ տերություններին, լրիվ անտեսվել է զենքի դիմելու գաղափարը, բայց բացառությամբ 1722- 1730թթ. ազատագրական ապստամբությունների ընթացքում, երբ հայ քաղաքական միտքն ընթանում էր քրիստոնյա տերությունների և հիմնականում ցարական Ռուսաստանի օժանդակության որոնումներով, դրան նախորդած և հաջորդած շրջանում մենք գրեթե անտեսված ենք տեսնում սեփական ուժերին ապավինելու գաղափարը, և տարբեր տերություններից օգնություն աղերսող հայ քաղաքական մտքի հոգևորական և աշխարհիկ ներկայացուցիչները հիմնականում հենվել են օտարի օգնությամբ ազատագրվելու քննություն չբռնած հայեցակետի վրա: Սեփական ուժերին ապավինելու հայեցակարգն է թերևս

ընկած Մովսես Բաղրամյանի քաղաքական հայացքների հիմքում, մի անձնավորության, որի՝ Հայաստանի ազատագրման նկատմամբ մոտեցումները, ի տարբերություն Իսրայել Օրու, Շահամիր Շահամիրյանի և այլոց, այսօր այնքան էլ հայտնի չեն հասարակական – քաղաքական լայն շրջանակներին:

Ավելորդ չենք համարում նկատել, որ հայոց պատմագրության կողմից 15 – 18 –րդ դարերի կամ ուշմիջնադարյան հայ քաղաքական միտքը մատուցվել է և շարունակում է մատուցվել որպես ազատագրական շարժումներ, այն դեպքում, երբ նման շարժումներ, ի տարբերություն Սյունիքի և Արցախի ապստամբությունների, չեն եղել: Ուստի կարծում ենք, որ ավելի ճիշտ կլիներ օգտագործել ազատագրական ձգտում կամ քաղաքական մտքի ընթացք եզրույթները: Այս հայեցակարգային մոտեցումն էլ դնելով մեր մոտեցումների հիմքում՝ մենք ցանկանում ենք վեր հանել այն բոլոր նրբերանգները, որոնք առկա են եղել հայ ուշմիջնադարյան քաղաքական մտքի դրսևորումներում:

Հայոց վերջին՝ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375թ.) պետականության վերականգնման ձգտումը երկարատևորեն իշխել է հայ հոգևոր և աշխարհիկ խավերի ներկայացուցիչների մտահորիզոնում: Սակայն, դա բարդ խնդիր էր, քանզի հայոց իշխանական բոլոր տները կամ վերացել էին, կամ էլ իրենց դիրքերը զիջել էին քոչվոր ցեղերին: Հայ իշխանական տների որոշ շառավիղներ՝ Օրբելյանները, Հասան – Ջալալյանները, Դոփյանները, Վաչուտյանները և Պռոշյանները, իշխում էին Սյունիքի, Արցախի, Արագածոտնի և մի քանի այլ շրջաններում: Փոքրիկ իշխանություններ գոյություն ունեին Զեյթունում, Սասունում, Մակուում: Չի կարելի պնդել, որ սրանք համախմբված էին պետականության վերականգնման գաղափարի շուրջ: Վասպուրականի Արծրունիների ազգականները՝ Սեփեդինյաններն էլ ամփոփված էին Աղթամարում և նրա շրջակայքում: Հենց Վասպուրականում էր, «որ, առավել, քան այլուր, գուրգուրվում էին հայկական պետականության հիշատակները», և այստեղ երբեք լքված չէր «Հայաստանի պետականության վերականգնման գաղափարը»[1]:

Անհրաժեշտ է շեշտել, որ հայոց պետականության անկումից հետո նրա վերականգնման ձգտումը նախ կապվում էր Բյուզանդական կայսրության հետ, իսկ այնուհետև հիշյալ ժամանակահատվածում՝ 1453թ.՝ այս կայսրության անկումից հետո, հայ քաղաքական միտքը իր դեգերումները շարունակեց

[1] **Հովհաննիսյան Պ.**, Հայ ազատագրական շարժումները (15-րդ դարի կես – 18–րդ դարի վերջ), Երևան, 2010, էջ 11: Hovhhanissyan P., Hay azatagrakan sharjumnery (15 – rd dari kes – 18 – rd dari skizb), Erevan, 2010, ej 11:

Հռոմի պապի մոտ, Վենետիկում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Գերմանիայի իշխանությունների մոտ և ի վերջո Ռուսաստանում:

Հայության համար կարևորագույն իրադարձություն էր կաթողիկոսական աթոռի՝ դարավոր դեգերումներից հետո՝ 1441-ին, Էջմիածնում վերահաստատվելը, որն այնուհետև իր ձեռքը փորձեց վերցնել ժողովրդի ղեկավարման որոշ գործառույթներ և կարևորագույն դերակատարություն ունեցավ հայ ուշ-միջնադարյան քաղաքական մտքի ձևավորման առումով, թեպետ չի կարելի պնդել, որ նրա մատնանշած հայոց պետականության վերականգնման ուղին միանգամայն ճիշտ էր: Չպետք է նաև անտեսել, որ հայոց հոգևոր առաջնորդների քաղաքական դիրքորոշումներում հեղհեղուկ էր և հաճախ չէր մատնանշվում պետականության վերականգնման անհրաժեշտությունը, այլ պարզապես շեշտվում էր քրիստոնյա տերությունների միջոցով հայության ազատագրման անհրաժեշտության մասին մահմեդական ցեղերից և ժողովուրդներից՝ առանց հստակեցնելու, թե եթե այդ ազատագրումը լինի, ապա ինչպիսի կարգավիճակ պետք է ունենա Հայաստանը: Մենք ցանկանում ենք անդրադառնալ հայոց պետականության կամ թագավորության վերականգնման թերևս առաջին փորձին, որին գնաց Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսը, որը սերում էր վերոհիշյալ Սեփիդինյաններից կամ Արծրունիներից: Նա իր քաղաքական ծրագրերը փորձում է կյանքի կոչել կարա - կոյունլուների տիրակալ Ջիվանշիրի (1437 – 1467) օգնությամբ, որի օրոք տեղի ունեցավ կաթողիկոսության հաստատումը Էջմիածնում: Այլ ուղի որոնել հնարավոր էլ չէր, քանզի Բյուզանդական կայսրությունը գտնվում էր անկման շեմին, և ողջ Անդրկովկասն ու Միջին Արևելքը ապրում էին տարածաշրջանի ժողովրդագրական պատկերի փոփոխության գործընթաց: Զաքարիան այն հազվագյուտ հոգևորականներից մեկն էր, որն ուներ զինված զորաջոկատ՝ հարկ եղած պարագայում կռվելու քոչվոր ցեղերի դեմ, և այս հանգամանքը պակաս նշանակություն չունեցավ Ջհանշահի հետ լեզու գտնելու համար: Երբ վերջինս 1458թ. սկսել էր իր արևելյան երկրորդ խոշոր արշավանքը, նրա դեմ ապստամբություն բարձրացրեց որդին՝ Հասան - Ալին: Վերջինիս կողմնակիցների դեմ իր ուժերով դուրս է գալիս Զաքարիան, Վանա լճում խորտակում է նրանց լաստանավերը՝ փրկելով Աղթամարը կողոպուտից: Այնուհետև լուր առնելով, որ Ջհանշահը վերադառնում է, իր ընտանիքով գնում է նրան ընդառաջ և Խոյում հանդիպելով տեղեկացնում է, որ նրա որդին իր դեմ

մահափորձ է նախապատրաստում: Ջհանշահը արշավում է Հասան - Ալու դեմ և ճնշում նրա ապստամբությունը[2]:

Ներկայանալով որպես Արծրունիների տոհմի սերունդ՝ Զաքարիան ցանկանում է իր կաթողիկոսությունը տարածել ամբողջ Հայաստանի վրա: Եվ այս հարցում նրան աջակցում է Ջհանշահը: Զաքարիան 1460թ. դառնում է Ամենայն Հայոց կաթողիկոս, որից հետո փորձում է կյանքի կոչել իր քաղաքական ձգտումները, այսինքն՝ վերականգնել հայոց թագավորությունը: 1463թ. նա բանակցությունների մեջ է մտնում Ջհանշահի հետ՝ Վասպուրականի հայոց թագավորությունը վերականգնելու խնդրով և որպես թագավորի թեկնածուի մատնանշում է իր եղբորորդի Սմբատ Սեֆեդինյանին: Սակայն, նույն թվականին նա թունավորվում է և մահանում[3]: Նրան հաջորդեց Ստեփանոս Դ կաթողիկոսը, որը շարունակեց բանակցությունները՝ Սմբատին, որն իր եղբայրն էր, հայոց թագավոր օծելու վերաբերյալ: 1465-ին կաթողիկոսն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում Սմբատին օծում է հայոց թագավոր: Բնականաբար, պետք է հասկանալի լինի, որ Սմբատի թագավորությունն ընդգրկում էր միայն Աղթամար կղզին և նրա հարակից տարածքները, և քաղաքական ռոմանտիզմի մեջ կընկնենք, եթե պատկերացնենք, որ այն կարող էր տարածվել Հայաստանի զգալի մասի վրա: Ուրեմն «թագավոր հայոց» հասկացությունը ձևական էր: 16-րդ դարի վենետիկցի մի վաճառականի ուղեգրության մեջ ներկայացված հետևյալ տարածքը թերևս պետք է վերագրել Սմբատի թագավորությանը. «Կղզու վրա կա մի փոքրիկ քաղաք երկու մղոն շրջագծով, քաղաքն ունի այնքան տարածություն, որքան կղզին: Այս քաղաքը կոչվում է Արմենակ, շատ բազմամարդ է, և միայն հայ քրիստոնյաներն են բնակվում այնտեղ, առանց որևէ մահմեդականի. ունի շատ եկեղեցիներ, բոլորը հայ քրիստոնյաների պաշտամունքի համար: Քաղաքի կամ կղզու դիմաց գտնվում է մի ծովածոց, հիանալի մի դաշտով, որն ունի բազմաթիվ գյուղեր՝ բնակված հայ քրիստոնյաներով...»[4]:

---

[2] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958, էջ 173: JE dari haeren dzeragir hishatakaranner, h. B, kazmec L. Xachikyan, Erevan, 1958, ej 173:

[3] Մանր ժամանակագրություններ, 13–18-րդ դարեր, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, հ. 1, էջ 143: Manr jamanakagrutunner, 13–18–rd darer, kazmec V. Hakobyan, erevan, 1951, ej 143:

[4] **Հակոբյան Հ.,** Ուղևորություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 300 – 301: Hakobyan H., Uxevorutunner, H. A, Erevan, 1932, ej 300 – 301:

Մենք համոզված ենք, որ այս տարածքներով է սահմանափակվել հայոց թագավորությունը, որովհետև ժողովրդագրական պատկերի ոչ միակերպության հայկական այլ տարածքների վրա առկայությունը չէր կարող չխոչընդոտել այս թագավորության ընդարձակումը: Սմբատ Արծրունի – Սեֆեդինյանը վերջին անգամ հիշատակվում է 1471-ին, որից հետո նրա մասին տեղեկությունների այլևս չենք հանդիպում:

Սմբատի թագավորությանն այս փոքրիկ անդրադարձով մենք փորձեցինք ցույց տալ ոչ այնքան այն, որ իսկապես 1465թ. վերականգնվում է հայոց թագավորությունը, այլ այն, որ հայ քաղաքական միտքը չէր համակերպվում դրա կորստի հետ: Նրա թագավորությունն առաջացավ Զաքարիայի որդեգրած քաղաքական ճշգրիտ քայլերի արդյունքում, մի փոքրիկ տարածքի վրա՝ Ջհանշահի և նրա հակառակորդների հակասության ճիշտ օգտագործման շնորհիվ: **Դրա կարևոր քաղաքական դասն այն է, որ քաղաքական ցանկությունները կյանքի կոչելու համար ամենևին ճիշտ չէ առաջնորդվել այն սկզբունքով, որ քրիստոնյա պետությունները միայն կարող են նպաստել այդ ցանկությունների իրականացմանը, այլ ընդհակառակը՝ քաղաքական շահերի ճիշտ ընկալման դեպքում դավանանքի ընդհանրությունը քաղաքական կողմնորոշման հիմքում դնելը ավելի հաճախ անարդյունավետ է**: Ճշմարիտ է, այնպիսի բարդ և հակասական ժամանակաշրջանում, ինչպիսին 15-րդ դարն էր, հնարավոր չէր լուծել հայոց պետականության վերականգնման հարցը, մանավանդ որ իրար դեմ պայքարի մեջ էին մահմեդական ցեղերը, այնուամենայնիվ այս փոքրիկ իրադարձությունն այս հայեցակետի ճշտության մի ավելորդ վկայությունն էր:

Սակայն, արդեն 16-րդ դարի կեսերից հայ քաղաքական միտքն ընթանում էր այն խոտոր ճանապարհով, որ քրիստոնյա տերությունների օգնության մեջ պետք է գտնել ազատության կամ հայոց պետականության վերականգնման հնարավորությունը, որն այդպես էլ իրեն չարդարացրեց:

ԱՄՓՈՓՈՒՄ

Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո (1375թ.) պետականության վերականգնման ձգտումը իշխել է հայ հոգևոր և աշխարհիկ խավերի ներկայացուցիչների մտահորիզոնում:

Հայոց պետականության վերականգնման առաջին փորձն արել է Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսը: Նա իր քաղաքական ծրագրերը կյանքի է կոչել կարա - կոյունլուների տիրակալ Ջհանշահի (1437 – 1467) օգնությամբ:

1463թ. նա բանակցությունների մեջ է մտել Ջհանշահի հետ՝ Վասպուրականի հայոց թագավորությունը վերականգնելու խնդրով և որպես թագավորի թեկնածու է մատնանշել իր եղբորորդի Սմբատ Սեֆեդինյանին: Նրան հաջորդած Ստեփանոս Դ կաթողիկոսը, շարունակելով բանակցությունները, իր եղբայր Սմբատին 1465թ. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցում օծում է հայոց թագավոր: Սմբատի թագավորությունն ընդգրկել է միայն Աղթամար կղզին և նրա հարակից տարածքները, որը նշանակում է, որ «թագավոր հայոց» հասկացությունը ձևական էր:

Բանալի բառեր – պետականության վերականգնում, քաղաքական միտք, քաղաքական կողմնորոշում, կաթողիկոսություն, թագավորություն, քրիստոնյա տերություններ:

ПЕРВАЯ ПОЛИТИЧЕСКАЯ ПОПЫТКА ВОССТАНОВЛЕНИЯ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ И ПРИЧИНЫ ЕЕ ПРОВАЛА

АЙК МАРГАРЯН

После падения армянского киликийского царства (1375 г.) стремление к восстановлению государственности господствовало в умах представителей духовных и светских сословий. Первую попытку восстановления армянской государственности предпринял католикос Ахтамара Закариа Г. Он свои политические программы призвал к жизни при помощи владыки каракоюнов Джаханшаха (1437-1467г.).

В 1463 году он вступил в переговоры с Джаханшахом с просьбой восстановления армянского царства Васпуракан, и в качестве кандидатуры царя указал на своего племянника Смбата Сефединяна. Сменивший его католикос Степанос Д, продолжая переговоры, своего брата Смбата освящает в качестве армянского царя в церкви Святого Креста на Ахтамаре, в 1465 году. Царство Смбата охватывает только остров Ахтамар и прилегающие к нему территории, что означает, что понятие “армянский царь” было формальным.

Ключевые слова – восстановление государственности, политическая мысль, политическая ориентация, патриаршество, царство.

THE FIRST POLITICAL ATTEMPT TO RESTORE THE ARMENIAN STATEHOOD AND THE CAUSES OF ITS FAILURE

HAYK MARGARYAN

This article is about the endeavor to restore the statehood of the Cilician Armenian kingdom after its fall in1375. This endeavor dominated the outlook of the representatives of the Armenian religious and secular classes.

Catholicos Zaqaria "C" of Aghtamar was the first who attempted to restore the Armenian statehood with the help of Jhanshah who was the shah of Kara-Koyunlun (1437-1467).

In 1463, he started to negotiate with Jhanshah to restore the kingdom of Vaspurakan. He nominated Smbat Sefedinyan, his cousin as the candidate for the king. Catholicose Stepanos D, the successor of Catholicos Zaqaria "C" of Aghtamar, continuing negotiations anointed and crowned his brother, Smbat Sefedinyan king of Armenia in 1465 at the Church of St. Cross in Aghtamar.

The kingdom of Smbat incorporated only the Aghtamar Island and its neighboring areas, thus the notion of "King of Armenia" was formal.

Key words - restoration of statehood, political thought, political orientation, patriarchate, kingdom, Christian states.